

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(լրացուցիչ կրթություն) տալու

## Կ Ա Ր Գ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական ագրարային համալսարանում ուսանողներին բանվորական մասնագիտությամբ ուսուցումը լրացուցիչ կրթություն է, որի արդյունքում տրվում է համապատասխան վկայական:
2. Բանվորական մասնագիտություն ստանալու նպատակով, ուսանողը հայտ է ներկայացնում տվյալ ֆակուլտետի դեկանին: Դեկանը ՀՊԱՀ ուսումնական մասի հետ համատեղ ձևավորում է խմբերը, ենթախմբերը, որոշում դրանց կազմակերպման ժամկետները և ձևերը և կազմակերպում է ուսումնական գործընթացը:
3. Բանվորական մասնագիտությամբ ծրագրեր իրականացնող ամբիոնները սահմանված կարգով կազմում և հաստատման են ներկայացնում անհրաժեշտ ծրագրերը:
4. Բանվորական մասնագիտությամբ ուսանողների գիտելիքների ավարտական քննությունը /ատեստացիան/ կատարվում է դեկանի կողմից ներկայացված և ռեկտորի հրամանով հաստատված հանձնաժողովում: Ատեստացիոն հանձնաժողովի նախագահ, որպես կանոն, նշանակում են համապատասխան վերադաս կազմակերպությունների և արտադրության նշանավոր մասնագետները:
5. Բանվորական մասնագիտության դասավանդումը, սահմանված ժամաքանակի կատարումը, նյութատեխնիկական բազայի ապահովումը և օժանդակ նյութերի ձեռք բերումը կատարվում է համալսարանի միջոցների հաշվին: Ուսանողը լրացուցիչ մասնագիտության վկայականի և պետական որակաորման հանձնաժողովի աշխատանքների համար ՀՊԱՀ-ի դրամարկղ՝ սահմանված կարգով, մուծում է **1500** դրամ:

